ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայքում մուտքագրելով IE40-744C-4B4D-B09A հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/2831/02/26

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ԵՎ ԱՌԱՐԿԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22.04.2026թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Լուիսոֆտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ ՀՀ արդարադատությանննախարարության (այսուհետ նաև՝ Պատասխանող), վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույնպահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Երրորդանձ)՝ հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելուպահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջիմասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարաններկայացվել է 14.03.2026 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/2831/02/26 քաղաքացիականգործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքիառաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին**16.03.2026 թվականին, ժամը 21:32-ին**, իսկ հասանելի է դարձել **17.03.2026թվականին**:

Դատարանի 19.03.2026 թվականիորոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 24.03.2026 թվականիորոշմամբ ՀՀ արդարադատության նախարարի միջնորդությունը՝ գնման գործընթացի կասեցումը վերացնելու մասին, բավարարվելէ, և վերացվել է թիվ «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05» ծածկագրով գնմանգործընթացի՝ օրենքի ուժով առաջացած կասեցումը:

Դատարանի 30.03.2026 թվականի որոշմամբ որոշվել է թիվ ԵԴ2/2831/02/26քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտիհրապարակման օր նշանակել 29.04.2026 թվականին՝ հրապարակելով դատականիշխանության պաշտոնական կայքում:

Դատարանի 01.04.2026 թվականի որոշմամբ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ն ներգրավվել է որպես հայցվոր կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույնպահանջներ չներկայացնող երրորդ անձ:

Դատարանի 10.04.2026 թվականի որոշմամբ Հայցվորի ներկայացուցչիմիջնորդությունը՝ գործը դատական նիստումքննելու մասին, մերժվել է:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 21.04.2026 թվականին ներկայացվել է միջնորդություն՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին:

Դատարանն, ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և այն համադրելովներկայացված հայցադիմումի հետ՝ արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցիցյուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավորմիջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումկայացնելը:

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքիիմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղվածնյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափնավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ

մասի համաձայն՝ սույնօրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքումսկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքումդրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանիդատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելուվերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այնդեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելուվերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանցներկայությամբ:

ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելուվերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքումփոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանությաննպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջինատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծությանարդյունքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարությանօրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասը հայցի հիմքի և առարկայի կամ դրանցիցյուրաքանչյուրի թույլատրելիության համար սահմանել է երկու չափանիշի միաժամանակյաառկայություն՝ հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունընդատարանն ընդունում է, եթե չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվողշահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և քննվողգործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի11-րդ մասի համաձայն՝ հայցի առարկան փոփոխելու դեպքում պետականտուրքի գումարի չբավականացնող մասը գանձվում է հայցի առարկան փոփոխելիս՝ փոփոխվածհայցի առարկային համապատասխան:

Վերոնշյալ հոդվածի վերլուծությունից հետևում է, որ հայցիառարկան փոփոխելու դեպքում սահմանված է պետական տուրքի գանձման պահանջ այնդեպքում, երբ հայցի առարկան փոփոխելու դեպքում սկզբնական հայցով վճարված պետականտուրքի գումարը չի բավականացնում: Ընդ որում, պետական տուրքը գանձվում է հայցիառարկան փոփոխելիս, հետևաբար հայցի առարկայի փոփոխության դեպքում դատարանը պետք էանդրադառնա նաև պետական տուրքի գանձման հարցին՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիականդատավարության օրենսգրքի 102-րդ հոդվածի 11-րդ մասը:

Վերոգրյալը հաշվի առնելով Դատարանը գտնումէ, որ տվյալ դեպքում հայցի հիմքի և առարկայիփոփոխությունը թույլատրելու մասին

միջնորդությունը բավարարելու դեպքում իրավունքիկամ օրենքով պահպանվող շահի փոփոխություն առկա չէ, ինչպես նաև քննվող գործը դուրսչի գա առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, բացի այդ հայցի նորառարկայի շրջանակներում պետական տուրքի չբավականացնող մասը վճարվել է Հայցվորիկողմից, հետևաբար Հայցվորիներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119.5-րդ հոդվաի համաձայն՝

(...)

3. Համակարգն օգտագործող անձիհամար դատական ակտը համարվում է հրապարակված (կամ կայացված), եթե այն Համակարգիմիջոցով **հասանելի է դարձել** Համակարգն օգտագործող անձին:

4. Համակարգն օգտագործող անձիհամար դատական ակտը համարվում է վերջինիս ուղարկված, եթե այն **Համակարգիմիջոցով հասանելի է** դարձել Համակարգն օգտագործող անձին:

5. Դատական ակտերը համարվում ենՀամակարգն օգտագործող անձի կողմից ստացված դրանք իրեն **հասանելի դառնալու պահիցերեք աշխատանքային օր հետո**:

(...)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7 հոդվածի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը կամհայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում էհայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյաժամկետում:

Տվյալդեպքում հայցվոր՝ «Լուիսոֆտ» ՍՊԸ-ի ներկայացուցչիմիջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, բավարարման ենթակա լինելուպայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող՝ ՀՀ արդարադատության նախարարությանը և երրորդ անձ՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ինպետք է տրամադրվի սույն դատականակտը ստանալուց հետո **հնգօրյա ժամկետ**՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Լուիսոֆտ» ՍՊԸ-ի ընդդեմ ՀՀ արդարադատության նախարարության, վեճի առարկայի նկատմամբինքնուրույն պահանջներ

չներկայացնող երրորդ անձ՝ «Հելիքս Կոնսալտինգ» ՍՊԸ-ի՝ հայտնանբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին բավարարել.

Թույլատրել հայցի հիմքը **<u>փոփոխել և լրացնել</u>** հետևյալ բովանդակությամբ.

<u>«ՀՀ արդարադատության նախարարությունը, ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի, 16.04.2026թ-ին կայացրել է N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը՝ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ /կցվում է/</u>:

<u>Վերոհիշյալ որոշման համաձայն նշվել է հետևյալը.</u>

<u>Քննարկվող դեպքում, ինչպես նշվել է սույն որոշման 1-ին բաժնի 1.5-րդ կետում, 05.03.2026 թվականին կայացած նիստի շրջանակներում արձանագրված ոչ բոլոր անհամապատասխանություններն են շտկվել Հայցվորի կողմից</u>: **<u>Դրանք շտկվել են մասամբ (մասնագիտական փորձառության մասով բացառապես N 5 Արձանագրության 1-ին կետով արձանագրված, ինչպես նաև նույն Արձանագրության 6-րդ կետով աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջների մասով արձանագրված անհամապատասխանության մասով), չի շտկվել մասնագիտական փորձառության մասով N 5 Արձանագրության 2-5-րդ կետերով արձանագրված անհամապատասխանությունը: Նման պայմաններում, Գնահատող հանձնաժողովը 09.03.2026 թվականին տեղի ունեցած նիստում որոշել է մերժել մասնակցի հայտը՝ Մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշին չհամապատասխանելու հիմքով պայմանավորված</u>**:

<u>Արդյունքում, Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին «ԼՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ԴՈՒՆԱՅՍ» ՍՊԸ-ի համատեղ գործունեության կարգով (կոնսորցիում) հետագա մասնակցության դադարեցմանը: Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված իրավական հիմքը, ղեկավարվելով Օրենքի 6- րդ հոդվածի 2-րդ մասով՝ ՈՐՈՇՈՒՄ ԵՄ «ԼՈՒԻՍՈՖԹ» ՍՊԸ-ին և «ԴՈՒՆԱՅՍ» ՍՊԸ-ին համատեղ գործունեության կարգով (կոնսորցիում) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:</u>

<u>(...)</u>

<u>Գտնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի 16.04.2026թ-ին կայացրած N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը՝ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին</u>

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ իրավաչափ չէ և հակասում է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը հետևյալ հիմնավորմամբ.

(...)

Ամբողջացնելով վերոգրյալը, գալիս ենք այն եզրակացությանը, որ մասնակցին՝գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակումընդգրկելու համար անհրաժեշտ 3 նախապայմաններից առնվազն 1-ը բացակայում են՝մասնակցի վրա դրված չի եղել պայմանագրի և որակավորման ապահովման ապահովումներկայացնելու պարտավորություն:

Ելնելով այն հանգամանքից, որ Որոշման մեջ առկա չեն փաստականհանգամանքներ, որոնք կարող էին ընկած լինել Որոշման հիմքում, իսկ Որոշման իրավականհիմքը անտեղի է և կապ չունի մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների անգամենթադրյալ խախտման հետ, հանգում ենք այն եզրակացությանը, որ Որոշումը զուրկ էիրավական հիմքերից և չի պարունակում տեղեկատվություն այն փաստական հանգամանքներիվերաբերյալ, որոնց վրա հիմնվել է պատվիրատուի ղեկավարը՝ Որոշումը կայացնելիս: Նմանպայմաններում գտնում ենք, որ Վիճարկվող որոշումը չի կարող համարվել ո՛չ օրինական,ո՛չ հիմնավորված: Ընդ որում, Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասիհամաձայն Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացինմասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարիպատճառաբանված որոշման հիման վրա: Սույն մասում նշված որոշումը պատվիրատուիղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքվածպայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանիլուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվաընթացքում:

(...)

Սույն գործում առկա փաստերից հետևում է, որ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ի վերաբերյալ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներկառելու վերաբերյալ որոշումը կայացվել է վերոնշյալ միաժամանակյա վավերապայմաններից միայն այն հիմքով, որ վերջինս ենթադրաբար խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորություն: Սակայն, հարկ ենք համարում փաստել, որ սույն դեպքում միայն այդ հիմքի ի հայտ գալը դեռ բավարար չէր Ընկերությանը ցանկում ներառելու մասին որոշում կայացնելու համար: Վերջինս կարող էր ցանկում ներառվել գնման գործընթացով ստանձնած պարտավորության խախտման և հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը չվճարելու հիմքերի միաժամակյա առկայության դեմքում, ինչը մեր դեպքում առկա չէ:

(...)

Սույն գործում առկա փաստերից հետևում է, որ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն/կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ի վերաբերյալ գնումների գործընթացին մասնակցելուիրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը կայացվելէ վերոնշյալ միաժամանակյա վավերապայմաններից միայն այն հիմքով, որ վերջինսենթադրաբար խախտել է գնման ընթացակարգի շրջանակներում ստանձնած պարտավորություն:

Սակայն, հարկ ենք համարում փաստել, որ սույն դեպքում միայն այդ հիմքի հիայտ գալը դեռ բավարար չէր ընկերությանը ցանկում ներառելու մասին որոշում կայացնելուհամար: Վերջինս կարող էր ցանկում ներառվել գնման գործընթացով ստանձնածպարտավորության խախտման և հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովմանգումարը չվճարելու հիմքերի միաժամակյա առկայության դեպքում, ինչը մեր դեպքում առկաչէ:

Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակումստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրիմիակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցությանդադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չիվճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում նորմի կիրառմանհամար թվարկված բոլոր պայմանների առկայությունը պարտադիր է, եթե իրավական ակտումնշված նորմի կիրառումը պայմանավորված է միայն կամ շաղկապով բաժանված պայմաններով:

–

Հետևաբար, վերոնշյալ վավերապայմաններից թեկուզև մեկի բացակայությունըբացառում է այդ հիմքով մասնակցին գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցողմասնակիցների ցուցակում ներառելը:

Գնման գործընթացում այդ վավերապայմաններից մեկի՝ մասնակցից անկախ պատճառներովբացակայելը չի կարող մեկնաբանվել ի վնաս մասնակցի, և մասնակցին վերոնշյալցուցակում ներառելու հարցը քննարկելիս չի կարող արձանագրվել վավերապայմանիպահպանված չլինելը, քանի որ առնվազն նորմի դիսպոզիցիայում <> վավերապայմանիմասը պահպանված լինելու հանգամանքը չի կարող պարզաբանվել նման պահանջ ընդհանրապեսբացակայելու պատճառով: Հետևաբար՝ սահմանված ժամկետում հայտի ապահովման գումարըվճարելու պահանջ նախատեսված չլինելն ինքնաբերաբար չի կարող հանգեցնել այդվավերապայմանի առկայության վերաբերյալ եզրահանգման, քանի որ օրենսդիրը, այդպայմանները շաղկապելով, հստակ նպատակ է հետապնդել բացասական հետևանքի՝ գնումներիգործընթացին մասնակցելու իրավունք 7 չունեցող մասնակիցների ցուցակում

ներառվելուվրա հասնելը պայմանավորել միայն երկու վավերապայմանների համաժամանակյաառկայությամբ:

(...)

Անհրաժեշտ է արձանագրել, որ թիվ «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայցվորի կոնսորցիումի վրա չի առաջացել որևէ որոշակի ապահովման գումար վճարելու պարտավորություն: Հետևաբար, եթե նույնիսկ գնահատող հանձնաժողովի կողմից Հայցվոր կողմի ներկայացրած հայտը՝ ըստ Կարգի 32-րդ կետի 19- րդ ենթակետի գնահատվել է որպես «գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում» և դրա հետևանքով դադարեցվել է նրա մասնակցությունը տվյալ ընթացակարգին, այնուամենայնիվ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի հիմքով հայցվորին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար պահանջվող վերջին նախապայմանը՝ ապահովման գումարի չվճարումը, տվյալ գործով բացակայում է:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի «ա» ենթակետում օգտագործված «սահմանված ժամկետում չի վճարել» ձևակերպումը կարող է գործել միայն այն դեպքում, երբ գոյություն ունի օրենքով կամ հրավերով ձևավորված պարտադիր վճարման պահանջ, գտնում ենք, որ թիվ «ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05» ծածկագրով գնումների ընթացակարգի որևէ փուլում ապահովման գումար վճարելու պարտավորություն առաջացած չլինելու պայմաններում չի կարող առաջանալ նաև «սահմանված ժամկետում չվճարելու» իրավիճակ:

Գտնում ենք, որ վերոշարադրված փաստերի առկայության պարագայում «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը իրավաչափ չէ:

Գտնում ենք, որ ՀՀԱՆ-ԲՄԽԾՁԲ-26/05 ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից 09.03.2026թ. հրավիրված նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված՝ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշման հիմքով՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի 16.04.2026թ-ին կայացրած N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը՝ «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը իրավաչափ չէ, քանի որ այն ընդունվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության վկայակոչված նորմերի խախտմամբ, իսկ վերոհիշյալ հայտի մերժումն էլ եղել է ոչ իրավաչափ, որի հետևանքով իրավաչափ չէ նաև ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի 16.04.2026թ-ին կայացրած N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը:

(...)

Թույլատրել հայցի առարկան **<u>փոփոխել և լրացնել</u>** հետևյալ բովանդակությամբ.

<u>«2. Անվավեր ճանաչել «ԼՈՒԻՍՈՖՏ» ՍՊԸ-ն /կոնսորցիում «Դունայս» ՍՊԸ/-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին՝ ՀՀ արդարադատության նախարարության գլխավոր քարտուղար Համլետ Հարությունյանի 16.04.2026թ-ին կայացրած N ՀՀԱՆ-ԳՔ-2026/01 որոշումը:»</u>

2. Պատասխանող՝ ՀՀ արդարադատության նախարարությանը և երրորդ անձ՝ «ՀելիքսԿոնսալտինգ» ՍՊԸ-ին տրամադրել սույն որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072 Date: 2026.04.22 11:51:15 AMT **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am